ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» հունիսի 2017թ. **N----Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԴԱՎԻԹ ՕՀԱՆՅԱՆԻՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Դավիթ Օհանյանին նշանակել Երևանի քաղաքապետի տեղակալ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

«Դ. ՕՀԱՆՅԱՆԻՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քաղաքապետի տեղակալներին քաղաքապետի ներկայացմամբ նշանակում է ավագանին:

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանուն առաջարկվում է Երևանի քաղաքապետի տեղակալ նշանակել Դավիթ Օհանյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Դ. ՕՀԱՆՅԱՆԻՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Դ. Օհանյանին Երևանի քաղաքապետի տեղակալ նշանակելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Դ. ՕՀԱՆՅԱՆԻՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Դ. Օհանյանին Երևանի քաղաքապետի տեղակալ նշանակելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Դավիթ Օհանյան

Ծնվել է 1965թ. հունվարի 29-ին Երևանում:
1982թ. ավարտել է Հովհ. Հովհաննիսյանի անվան թիվ 52 միջնակարգ դպրոցը:
1983թ. աշխատել է «Էլեկտրագործարան»-ում՝ որպես փականագործի աշակերտ: Նույն թվականին զորակոչվել է ԽՍՀՄ զինված ուժեր:
1985թ. աշխատանքի է անցել նույն գործարանում որպես ֆրեզերագործի աշակերտ (ստացել է 2-րդ, 3-րդ և 4-րդ կարգ):
1985թ. ընդունվել է Երևանի ժողովրդական տնտեսություն ինստիտուտ, որն ավարտել է 1990թ.՝ ստանալով տնտեսագետի որակավորում:
1990թ.-ից աշխատել է Երևանի Մաշտոցի շրջանի հասարակական սննդի առևտրաարտադրական 9-րդ միավորումում՝ որպես ապրանքագետ: 1994-1996թթ. եղել է նույն ձեռնարկության փոխտնօրենը:
1997թ. հունվարի 31-ից մինչև 2008թ. հուլիսի 2-ը աշխատել է որպես Երևանի Մալաթիա-Սեբաստիա թաղապետարանի առևտրի և սպասարկումների կանոնակարգման բաժնի պետ:
2008թ. հուլիսի 3-ին ընտրվել է Մալաթիա-Սեբաստիա համայնքի ղեկավար:
2009թ. հունիսի 15-ին Երևանի քաղաքապետի որոշմամբ նշանակվել է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավար:
2013թ. նշանակվել է Երևանի քաղաքապետի տեղակալ:
Մասնակցել է «Առևտրի և ծառայությունների մասին», «Տեղական տուրքերի և վճարումների մասին» ՀՀ օրենքների նախագծերը մշակելու աշխատանքներին:
Հայաստանի սպառողների ազգային ակադեմիայի նախագահության պատվավոր անդամ է:
2010թ. հայրենանպաստ գործունեության համար պարգևատրվել է «Մայրական երախտագիտություն» հուշամեդալով:
2011թ. ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում «Համայնքների ֆինանսական աջակցության կատարելագործման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով պաշտպանել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման թեզը և ստացել տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան:
2011թ. ՀՀ-ում տեղական ինքնակառավարման համակարգը ներդնելու 15-ամյակի կապակցությամբ պարգևատրվել է ՀՀ Ազգային ժողովի «Պատվո մեդալով»:
2013թ. ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով պարգևատրվել է «Վազգեն Սարգսյան» մեդալով:
2013թ.-ին պարգևատրվել է «Նանսեն» հուշամեդալով:
2014թ.-ին ՀՀ նախագահի կողմից պարգևատրվել է «Անանիա Շիրակացի» մեդալով:
2015թ.-ին «Զինվոր» ՀԿ-ի կողմից պարգևատրվել է «Զինվոր Հայրենյաց» մեդալով:
2015թ.-ին «Մեծն Տիգրան» աշխարհազորային գնդի կողմից պարգևատրվել է «Մեծն Տիգրան» մեդալով:
2016թ.-ին պարգևատրվել է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության հուշամեդալով:
2016 և 2017թթ.-ին ՀՀ ՏԿԱԻ նախարարություն «Համագործակցություն հանուն փրկության» մեդալով:
2017թ.-ին ԷՂՀ նախագահի կողմից պարգևատրվել է «Մխիթար Գոշ» մեդալով:
1998թ.-ից Հայաստանի հանրապետական կուսակցության անդամ է, Մալաթիա- Սեբաստիա տարածքային կազմակերպության նախագահը:
Ամուսնացած է, ունի երկու որդի: